ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
№ 30
ՏԱՐԵԿԱՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թաւրիզում . . . . . 14 ղրան
Գաւառներում . . . . . 20 ղրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 բբ. 50 կ.
Թուրքիա . . . . . 50 ղրուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանգ
Ամերիկա . . . . . 2 տոլար 5 սենտ

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 10 շահի
Զորրորդ ,, ,, ,, 5 »

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal Armén. «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ادارهٔ روزنامهٔ «ميطق»

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողներից խնդրւում է գրեն պարզ, մաքուր և անպայման թղթի առաջին երեսի վրայ:
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու:
3. Մենք մերժում ենք „ա“ ի և „վ“ [illegible] լագրական հերձուածը և մեզ ենք վերապահում [illegible] նք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունա[illegible] գրագրութեամբ -ու-ով:
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադարձնում: Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախը:
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անունի հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի անուն ազգանունը:
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն կերծ է համարում պատասխանատուութիւնից:
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս:
8. Հասցէները փոխելու համար պէտք է մեզ ուղարկել 2 ղրան 10 շահի:

№ 30 1912 Թ. ՇԱԲԱԹ 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1912 Թ. № 30

ԿԱՐԴԱՑԷՔ

Քաղաքական միակ լուրջ հայ օրգան, բազմաբովանդակ, դաստիարակիչ և յոյժ զարգացուցիչ

„ՆՈՐ-ԱՇԽԱՐՀ“

Բաժանորդագրութիւնը Պարսկաստանի համար 12 ռուբլի: Բաժանորդագրուել ցանկացողները դիմելու են թերթիս խմբագիր-հրատարակչին: Ապառիկ պատուէր չի ընդունւում: Խմբ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ծախւում է Լիլաւա թաղի հայոց բաղնիսի յետևում գտնուող Մուսթաշարի թուրքական բաղնիսը, գնել ցանկացողները թող դիմեն յայտնի դէպքերին վախճանուած Սիղաթ-էլ-իսլամի տունը (Շէշկիլանում) և հարցնեն Ռիզա խան Մօա-էդ Զադէին:

ՀՐԴԵՀ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Տարօրինակ դրութիւն...

Որքան աւելի են խօսում մարդասիրական և խաղաղասիրական սկզբունքների մասին, այնքան աւելի է աշխարհը սպառնալից կերպարանք ընդունում և ազգերի սպառազինումները բազմապատկւում: Իսկ այդ բոլոր տենդային պատրաստութիւնները, «հաւաստիացնում են» մեզ, կատարւում են միայն «աշխարհի խաղաղութիւնը» պահպանելու համար: Այս մի կողմից

Իսկ միւս կողմից լարուած աշխատում, ծրագրում և գործի են սկրսում դիպլօմատները: Ցաճախակի տեսակցութիւններ... Համանման հայեացքների ընդգծումները...Status quo-ի պահպանումներ... և դարձեալ անվստահութիւն...դարձեալ կասկած իրարուց և բազմի ոյժերի կրկնապատկումներ:

Այսպէս ամեն ինչ տանում է դէպի կատաղի ու կործանարար սպառազինում, դէպի ծայրագոյն լարում: Եւ կարծես մարդիկ անտես են առնում, որ այդպիսով միայն իրենց այնքան «փայփայած» խաղաղութիւնն է, որ վտանգում են և քաղաքական աշխարհի համար նախապատրաստում այն հսկայ հրդեհը, որի նախանշաններն արդէն տեսնում ենք ալեկոծուած Բալկանում, ուր պատերազմական փողն է հնչում ահեղագոչ:

Քաղաքակիրթ աշխարհի գլխից այդ աղէտը, այդ զահուրելի հրդեհը անպակաս կլինի, քանի մանաւանդ անփոփոխ կայ ու կմնայ Օսմանեան կայսրութիւնը, կամ՝ Արևելեան Հարցը:

Հին է այդ հարցը: Եւ միշտ սպառնալից Եւրոպայի համար: Դա իւր ընկիզը առնում է Դարեհներից ու Քսերքսեսներից և հասնում է մինչև Օսման. վեհապետները, որոնք միայն ազգեր են տրորել, ջարդել, ստրկացրել և հայրենիքներ ամայացրել:

Տարաբաղդաբար Եւրոպական պետութեանց հակամարտ շահերը ցարդ թոյլ չեն տուել ընդհ. համաձայնութեամբ կարգաւորել այդ չարաբաստիկ հարցը և վերջ դնել Օսմանեան կօշմարին, որ դարերից ի վեր ծանրացել է Եւրոպայի և հպատակ ժողովուրդների կրծքին:

Լաւագոյն դէպքում Եւրոպան բաւականացել է միայն անդամահատելով Օսմանեան պետութիւնը, առաջացնելով ինքնավար երկիրներ կամ Բալկանեան մանր պետութիւնները, որոնցից վերջիններն այսօր սուր են մերկացրել ի պաշտպանութիւն իրենց ցեղակիցների:

Իր բարբարոսութիւններից խեղդամահ եղող Օսմ. կառավարութիւնը արդարացնում է իրեն ասելով, որ՝ Քրիստոնէութիւնը կռուի է դուրս եկել Մահմէդականութեան դէմ: Դիւրին միջոց միամիտներին խաբելու համար:

Այստեղ Քրիստոնեայի և Մահմէդականի հարց չկայ, այլ մի բարբարոս ըէժիմի, որին չիդիմանելով ազգեր ու պետութիւններ զէնքի են դիմում:

Ալբանները բոլորն էլ Քրիստոնեաներ չեն: Մալիսօրներն ու Առնաւուտները Քրիստոնեաներ չեն: Արաբները Քրիստոնեաներ չեն և սակայն այդ բոլորն էլ կռւում են Օսմանցոց դէմ՝ նոցա վայրագ ըէժիմի պատճառով: Մինթէ Քրիստոնեայ պետութիւնների մէջ Մահմէդականներ չկան:-Կան միլիոններով: Եւ սակայն դրանցից ոչ մէկը նմանը չնշում, անարգանք չի տեսնում կամ չի լսում «գեավուր» ստորացնող բառը, որով դարեր շարունակ ստորացրել է Քրիստոնեաներին ինքը Օսմանցին:

Նշանակում է միայն ինքը Օսմանցին է ստեղծել Քրիստոնեայի հարցը: Սակայն խնդրին այդպէս չի նայում Արևմուտքը, այդպէս չի նայում ամբողջ Բալկանը, որ չհանդուրժելով այլ ևս Մակեդոնիոյ իր ցեղակիցների դրկանքներին, պատերազմ յայտարարեց Օսմանեան կառավարութեան:

Մենք համակրանքով ենք լսում Բոլգարիոյ, Սերբիոյ, Յունաստանի և Մոնթէնէկրոյի դաշնակցութիւնն ու պատերազմը Տաճկաց դէմ: Այդ երիտասարդ պետութիւնները կռւում են յանուն քաղաքակրթութեան և տառապած ժողովրդների ազատութեան:

Միայն ցաւալի է, որ Աւստրիան իր շահերի համար՝ անպատշաճ դիրք է բռնել դէպի այդ դաշնակիցները և այդպիսով գալիս է զօրեղացնելու այն վատ բազուկը, որ ջարդերից բացի ոչ մի հումանիտար գործ չի կատարել երբէք:

Արդար չէ Աւստրիան իր դերում և երանի ամբողջ Աւստրիան, դոնէ, Կրամարժի պէս յայտարարէր-Մենք քրիստոնեաներ ենք և քաղաքակրթութիւնը չէ կարող ճորտութիւն ճանաչել:

Իսկ Օսմանցին դարաւոր ճորտութ. իրաւունքն է ուզում միայն յարատևել: Այդ խափանել և ջնջել են վճռել Բալկանեան պետութիւնները և անցել արդէն Ռուբիկոնը:

Սլաւոն մարտիկ ժողովուրդն է սուր մերկացրել, ուստի և թող այդ սուրը բաղդ վճռէ: Պատիւ այն բազուկներին, որոնք բարձրացել են յանուն իրաւունքի, արդարութեան, ազատութեան և յանուն բարբարոսօրէն ճնշուածների:

Բալկանեան Դաւիթներն են խիզախում Վոսփորի Գողիաթի դէմ և եթէ իրերը հակառակ ընթացք ստանան, անշուշտ Մեծ Ռուսաստանը չի զլանայ իր օգնութիւնը: Գոնէ Օսմանեան լծի տակ տանջուողների և նոցա դրսի ցեղակիցների աչքերը ուղղուած են դէպի Պետերբուրգ, որը միայն կարող է պատուար կանգնել Օսմանեան կործանիչ հեղեղին:

Բոցավառուած են Բալկանները: Ռուս, Վրացի, Հայ և այլ ազգերից կամաւորներ են գնում Բալկանները ուժեղացնելու ազատութեան և քաղաքակրթութ. հմր. կռուող դաշնակից բանակները: Բոլոր սրտերը դոցա համար են աղօթում: Բոլորի համակրանքը Բալկանների կողմն է թեքւում. Չկայ մի բերան, որ օրհնութեամբ բացուի Ջարդերով և սարսափներով անմահացած Օսմանցոց համար:

Մենք հայերս մինչև մեր ոսկրների ծուծը պղծուած, անպատուած կորացած, անարգուած և ստորացուած ենք եղել օսմանցիների պատառատող ճանկերում, ուստի չենք կարող հուսա չկանչել բոլոր նոցա համար, որոնք սուր են քաշել ջախջախելու, ստորացնելու և յետ մղելու այդ անկուլտուրական և յոշոտող տարրը:

Այնտեղ ուր խօսքն ու բանականութիւնը չեն գործում, պիտի պայթի վառօդը և որոտայ թնդանօթը:

Ահա այդ լեզուով են խօսում քաջարի Բալկանները Տաճկաց հետ: Մէկը կռւում է յանուն մարդասիրութեան և ազատութեան, միւսը (Տաճիկը) յանուն ստրկութեան յարատևութեան, յանուն բռնութեան: Գոնէ բարոյական յաղթանակը և մարդկութեան համակրանքը առաջինների կողմն է: Կեցցեն Բալկանները:

Ա. Տ.-Վ

Դարձեալ նոյն հարցի շուրջը

«Միտք»-ի նախորդ համարում մենք խօսեցինք մեր ժողովրդի համար մանր վարկային ընկերութիւն հիմնելու մասին: Այժմ նորէն գալիս ենք շեշտելու անհրաժեշտութիւնը այդ հիմնարկութեան:

Շատերը, անշուշտ կյիշեն Դաստաեվսկու «Ցանցանք և Պատիժ»

դրամայի գործողներից Մարմելադովի այս խօսքը. «Ինչ կասէք դուք այն մարդուն, որ գիտնալով հանդերձ իրեն փող պարտք չենտայ, բայց և այնպէս նա էլի գընում ուզում է և մերժւում»։

Որքան ճիշտ է ասուած այդ խօսքը մանաւանդ մեր քաղաքի կամ Պարսկահայերի համար։ Քանիսնե՞րն են այս ու այն վաճառականին դիմում, աղաչում, օգնութիւն խնդրում և սակայն լսում են «Զունինք» շանթահարող պատասխանը։ Մինչդեռ քրսակները 100-ներով դարսած են սնդուկում։

Ցարդ այնպէս է եղել, որ ոչ մի ունևոր դիմողին, հարևանին չի օգնել, զլացել է։ Գուցէ և ցանկացել ու բարեմաղթել է, որ հարևանն ընկնի, սնանկանայ և ինքը հարստանայ, հրամայի, իշխի և բոլորից խոնարհութիւն տեսնի։

Թող այդ ասիական ցանկութիւնը մոռացուի, լինի բաժին անցեալի։ Թող այսո՛հետև մարդասիրաբար առաջ գան մեր վաճառականները և հիմնեն մանր վարկի մի ընկերութիւն և դիւրութիւններ տան 10-եակներով պատուախնդիր, բայց և չունեւոր մարդկանց ոտքի կանգնելու, չխորտակուելու և վաշխառուների ճանկը չընկնելու և կամ անձնասպանութեան չդիմելու։

Մեր երկրում օրէնք չկնքուց փառաւորապէս օգտւում են խուլ անկիւնների վաշխառուները։ Նոքա ոչ միայն 3 շահով, այլ և մի աբասով անդամ տոկոսով փող չեն տալիս, հապա՝ 6 շահով կամ 36% հազիւ են յանձն առնում փող պարտք տալ և կորզել տներ ու դրաւներ։ Դա կատարեալ ծի աւազակութիւն է, և այդպիսիներին իբրև քրէական յանցաւորների պէտք է պատժել և հալածել։ Հրաւիրում ենք այդ հանգամանքի վրայ Ափահդար Սարգսի ուշադրութիւնը, որպէս զի մեր (հայ և թուրք) քանդված ժողովուրդը բոլորովին չքանդուի։ Անհրաժեշտ է ճրատարակել մի բացառիկ օրէնք, որ ով 12%-ից աւելով փող պարտք տայ, այդպիսին իբրև աւազակ, յափշտակիչ և մարդասպան խստագոյնս կպատժուի։ Այդ աւազակային վաշխառութիւնը մեծ ծաւալ ունի գաւառներում, ուր առանց այդ էլ ժողովուրդը կեղեքւում է շատ կողմերից։ Ցուսով ենք մեր կառավարութիւնն այս առաջարկը անտես չի առնի և պաշտօնապէս վրայտնի գաւառական բոլոր դատաւորներին, որ վերջիններս էլ յայտարարեն ի գիտութիւն ժողովրդեան, թէ 12%-ից աւելի պարտք տուողները ենկատուելու են իբրև աւազակներ կամ քրէական յանցաւորներ և ենթարկուելու են նըմանարժան պատիժների։

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Վերջին շաբաթների Բալկաններում յուզուած դրութիւնը զսպել չեղաւ և անխուսափելի դարձաւ պատերազմը Տաճկաց դէմ։

Բալկանեան երկրներից առաջին պատերազմ յայտարարողն եղաւ փոքրիկ բայց լեռնական և ռազմիկ Չերնոգորիան, որի Կ. Պոլսի դեսպան Պրլամենացը իր կառավարութեան կողմից Բ. Դռան յանձնեց պատերազմի յայտարարութիւնը Սեպտեմբեր 25-ին, և մեկնեց Պոլսից Ռումինական շոգենաւով. Տաճկական հաւատարմատարն էլ իր կառավարութեան հրամանով անմիջապէս թողեց Ցետինէն։

Չերնոգորական առաջին յարձակումը Տաճկաց վրայ եղաւ Սեպտ. 24-ին, ռմբակոծեցին Ղալաւի Բլոկհաուզը և յետ մղուեցին։ 25-ին Չերնոգորիացիք մեծ ոյժերով յարձակունցին Բերանի վրայ։

Պաշտօնապէս Տաճկաց դէմ պատերազմ յայտարարելուց յետոյ, Չերնոգորական թագաւորը, կոչով դիմեց իր ժողովուրդին։ Ճիշտ առաւօտեան ժամը 8-ին լսուեց առաջին թնդանօթը, որ արքայազն Պիոտրը ուղղեց ու պարզեց Դրագինում Ֆիւրքաց Պլանինիցիա կենտրոնական դիրքի դէմ։ Միաժամանակ Չերնոգորիական մարտկոցները կրակ բաց արին Վրանիէ և Ռօգան բերդերի ուղղութեամբ։ 20 րոպէից յետոյ թուրքերը հեռացան Պլանինիցայից։ Ընդհ. հրամանատար արքայազն Դանիլօն գտնուում էր կրուի մէջ։ Թագաւորը դիտում էր կռիւը Գօրիցի բարձունքներից արքայազն Միրկօյի հետ։ Թնդանօթաձգութիւնը յաջողութեամբ շարունակւում է։ Յեբեկով Չերնոգորացիք ստիպեցին լռել Ռօգանի մարդկոցներին։ Չերնոգորական հետևակ գունդը արտիլերիայի պաշտպանութեան տակ դանդաղ մօտենում է Դէչիչին։

Սեպտ. 27-ին Չերնոգորցիք վերցրին Զանինիկը։ 14 ժամ տեղ թընդանօթաձգութիւնից յետոյ, Սեպտ. 28-ին, չնայած թուրքաց յամառ դիմադրութեան, նոքա գրոհ տալով վերցրին Դէչիկը։ Ընկան շատ Չերնոգորցի օֆիցերներ։ Գոսհաժառանգ Դանիլօն ոչ մի բոպէ կռուից չէ անջատւում։ Կաէնիա թագուհին ղեկավարում է կարմիր խաչը։ Հարաւային զօրաբանակը գնաց. մինիստր Մարտինովիչի հրամանատարութեամբ անցաւ Բոյանը և տիրեց թուրքական Տարաբօլի դիմացի զինանոցներին, ոչ հեռու Սկիւտարից։

Հեռագիրը հաղորդեց, որ մինչև Հոկտ. 7-ը Չերնոգորցիք թուրքերից խլել են 10,000 գերի, 1500 հրացան 8 թնդանօթ. 310 վրաններ, պատերազմական մեծ քանակ պաշար և այլն։

Մեզ հաղորդում են որ Հոկտ. 6, լոյս 7-ի գիշերը Տաճկաց պատերազմ են յայտարարել Սերբերը, Բոլգարները և Յոյները։

Ահեղ պատերազմ է։ Տաճիկները սահման են հասցրել 200,000 լաւ կազմուած բանակ։

Չերնոգորցիք վերցրել են Տուզը և Մօտեցել Սկիւտարին։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Գիլանեան նամակներ [1])

10 Օգոստոս Էնզելի

Ժողովրդական առածն ասում է. խորամանկ աղուէսը երկու ոտով է թալակ ընկնում, այդ վիճակին արժանացաւ նաև «Անտառի քաղաքգէտը»-Զարդամը։

Երբ նա ներկայացաւ հիւպատոսին, վերջինս անմիջապէս բանդարկել տուեց նրան, մեղադրելով թէ որպէս պարտատիրոջ և թէ որպէս քաղաքական յանցաւորի՝ Սէյիդ Աշրաֆին աջակցելու պատճառաւ։

Թէ ինչով վերջացաւ վրացու պահանջի հարցը, այդ չգիտեմ, որովհետև զանազան կերպ լուրեր դուրս եկան

Իսկ վերջին դէպքի պատճառաւ 6 ամիս բանտարկեալի կեանք վարելուց յետոյ, Յունիսի սկզբներում աքսորվեց Ռուսաստան 5 տարի չգալու պատճառաւ։

Մինչ յիշեալի աքսորուելը Թալիշը խաղաղ դրութեան մէջ էր, երբ լուր հասաւ Մամադ խանին, որ մեծ եղբայրը աքսորուեց, սկսեց պատրաստութիւն տեսնել կռուելու Մարտ ամսում Քարկարի գնացած Սալար Ասադի հետ։ Ըստ Մամադ խանի ենթադրութեան իւր եղբօր թակարդ ընկնելը և աքսոր գնալու պատճառը Սալար Ասադի հայր Ամիտ Սալթանէն է, որովհետև նա 4 տարուց իվեր Ռուսաց հովանաւորութեան տակ է և նախկին թշնամութի՛ն էլ ունի, ուստի անպատճառ նրա ծրագրով է եղել ամէն ինչ։ Մամադ խանի նպատակն էր Սալարին գերի բռնել և ստիպել որ Ամիտ Սալթանան Միջամտի Զարդամին յետ տան և իւր տղան գերութիւնից ազատեն։ Երբ այդ լուրը Հիւպատոսի Քարկարու ակենտը իմացաւ նամակ գրեց, որ յետ քաշուի այդ չար նպատակից։ Նա գրել էր դու որքան էլ ուժեղ լինիս՝ Ռուս կառավարութեան դէմ կռուել չէս կարող, նա չլսեց։ Մի քանի օր փոխադարձ կռիւ եղաւ Մամադ խանի և Սալարի միջև։ Մամատ խանի կողմն է Քարկարու մեծամասնութիւնը - այն է նրանք, որ Ամիտ Սալթանի գերիշխանութեան դէմ են կռուել վերջին 5-6 տարին։

Խառնակ դրութեան այդ օրերին աքսոր գնացած Զարդամը վերադարձաւ։ Թէ ինչպէս է փախել բանդից, այդ դեռ պարզ չէ. այժմ նա Թալիշի ամառոցումն է, անշուշտ, որպէս ապստամբ։ Նա ձմեռանոց չի կարողանալու վերադառնալ Ռուսաց վախից։ Թէ ինչպէս կվերջանայ այդ ռազմասէր եղբայրների ըմբոստութիւնը, այդ էլ մօտ ապագան ցոյց կտայ։ Սալար Ասադը ճանապարհ չի գտնում հեռանալու դրանց երկիւղից, եթէ ոչ վաղուց հեռացած կլինէր Քարկարու սահրից։

Անհաշտ

(Վերջ).

ԺՈՂՈՎՐԴԻ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Թէհրան 10 Սեպտեմբեր

Վերջին մի քանի շաբաթներում ընդհանուր առմամբ պարսիկ ժողովուրդը առաջ է բերել մի շատ ուժեղ հակահոսանք ներկայ կառավարութեան դէմ։ Համարեա հասարակութեան բոլոր խաւերը զանազան ասուլիսներով մեղադրում են նրան, առարկելով որ նա զուտ Պարսկական չէ, այլ ներկայանում է Ռուս-Անգլիական հաւաձայնութեան մի alter ego-ն և աշխատում է օր ըստ օրէ ու արագ քայլերով առաջ տանել այդ երկու հարևան հզօր պետութեանց «հայրենավնաս տնձգութիւնները մայր երկրի մէջ»։

Այդ պատճառաւ էլ Պարսկաստանի զանազան մասերում հասարակութեան մէջ օրն իրուն աճում է ըմբոստութեան ոգին նրա դէմ։ Օրինակի համար առաջ բերենք միայն մի քանիսը։ Քիրմանշահ՝ Սալարդովլի դէմ ուղարկուած կամաւոր բանակի պառակտումը և մի մասի իր իսկ դէմ զանազան պահանջներով ըմբոստանալը արդէն վաղուց յայտնի է։ Իսկ այժմ համարեա միւս մասն էլ նոյն ուղղութիւնն ստացաւ, սակայն տարբեր ձևով։ Առաջինը պահանջում է ընդհանուր մինիստրական կազմի փոփոխութիւն, իսկ վերջինը առաջարկում է միայն Մէջլիսի վերաբացումը։

Իսկ միւս կողմից էլ Քիրմանի նախկին դատաւոր Ամիր Ազամը միանալով Հիւսէյն Զադէի հետ՝ առանձնացած Շահռուխ իւր կալուածներում (հանդերձ կառավարութեան երկու թնդանօթ ու հրացաններով) մի հեռագրով յայտարարում է Մինիստրական կազմի ապօրինի լինելը։ Մի այլ կողմում Սալար-Բուժնուրդը Խորասանի նահանգում նոյնպէս իրեն ըմբոստ է յայտարարում կառավարութեան դէմ։ Դեռ մի կողմ թողենք Շիրազում վերջին երկու ամսուայ ընթացքում կատարուածները քանի որ երկար ժամանակի ծննունդ են։ Խառն է մայրաքաղաքը, որի շուրջերում, կենտրոնական կառավարութեան քթի տակ ստեղծուել են զանազան անուններով աւազակային խումբեր, որոնց քանակի սահման որոշելն անհնար է։ Այդ խմբերը օր ըստ օրէ ստուարացնելով իրենց թիւը, սպառնալիք են ուղարկում մեր կառավարութեան։ Մէկը փոսան է կողոպտում, միւսը Թէհրան-Ղում ճանապարհում Հասանաբատ կայարանի մի խումբ ժանդարմաների զէնքերն ու ձիաներն է խլում և այլն։ Ահա այսպէս ամէն կողմից սկսել են իրենց սլաքները ցոյց տալ կառավարութեան։

Իսկ ուժասպառ կառավարութիւնն էլ Ֆրանց բոլորին անուանելով պետական դաւաճաններ, դեռ շարունակում է ճիալ իւր խարխլած շէնքի մէջ, պատճառաբանելով որ այդ բոլորը «հետևանք» են Ռուս-Անգլիական ոտնձգութիւնների որոնք առաջին անգամը չէ, որ կրկնւում են Պարսկաստանում, այլ դոքա սկիզբն են առնում Նասրէդդին Շահից, որից սկսած քանի՞-քանի Եպարքոսներ ու այլ Մինիստրներ պաշտօնանկ են եղել Ֆրանց առաջարկութեամբ։

Պարսկաստանը, ատում են Երիտասարդ Պարսիկները, այն ժամանակ կորցրեց իւր անկախութիւնը, երբ Ռուսիոյ հետ առաջին անգամ փոխադարձութիւն կնքելիս, կնքեց այն պայմանով, որ նախքան այդ պարտքի վճարելն Փրանցունք չունէր որևէ մի այլ պետութիւնից փոխառութիւն անելու։

Սեպտեմբեր ամսի մէջ յետոյ մինիստրական կազմը դարձեալ գործադադար է յայտարարել։ Եւ այդ անգործունէութեան մասին, որ մի մինիստրի և կամ ամենահասարակ պաշտօնեայի որ խօսացնելու լինիս, նա այդ կրացադրի նրանով. որ ինքը չիմանում ում կողմից է պաշտօնեայ և կամ ում օգտին պիտի գործէ։ Ահա այսպէս լքուած և միաժամանակ միմեանց առամ կրճտացնող կողմերը

[1]) Տես «Միտք» № 29

ՄՇալով ամեն մէկը իւր դիրքի մէջ, անհամբեր սպասում են Պարսկաստանի հարցի մասին Լօնդօնում կայացած ժողովի վերջնական վճռին։

Տ. Բ.-եան

ՀԱՅԸ ՀԱՅԻՆ Է ՍՊԱՆՈՒՄ

Հայ ժողովրդի անաչառ դատաստանին։

Թէհրան 22 Սեպտեմբեր

Թէհրանից 24 ֆարսաղ հեռաւորութեան վրայ գտնւում է Ղարաղան կոչւող գաւառամասը։ Այստեղ մէկ ու կէս տարի առաջ Հ. Յ. Դաշնակցութիւնը բաց էր արել երկու գիւղական ուսումնարան, որ կառավարում էր իր երկու ուսուցիչներով։ Նոյն ուսուցիչների միջոցաւ ևս գիւղացիներին ծախած են եղել մի քանի վարանդիլ հրացաններ, որպէս կանխավճար 5 ական թուման առաջադոյն ստանալով։

Ներկայ թուի Օգոստոս ամսին Թէհրանի նախկին ուսուցիչ Արշալոյս, Հայկ, և Սարգիսը նոյն կուսակցութեան կողմից ուղարկւում են գանձելու թէ հրացանների մնացորդ արժէքները, և թէ Ղարաղանի ուսուցիչների յետամնաց ոռճիկները։ Սարսափելի խիստ միջոցներով գանձման եղանակի պատճառաւ Վերի-Զանախչեցիների և յիշեալ պարոնների միջև նոյն ամսի վերջերում առաջացել է կատաղի զինու ընդհարում, որ տևել է մէկ ժամ։ Գիւղացիներից սպանուած են Հայրապետ Իսպղուլիան, Իսահակ Իսմայէլեան, և ծանր վիրաւորուել են Յովհաննէս Իսմայէլեան և Վահան Տէր Յովհաննիսեան։ Պարսկա-ժողովրդական առածն ասում է «չմեռնես մինչև ես քեզ մեռցնեմ»։ Այսպէս էլ «հայ ազգի պահապան հրեշտակները»

զէնք են բաժանում գիւղացիներին, որպէս զի օտարներից պաշտպանուեն, բայց միւս կողմից իրենք են սպանում նրանց։

Ինկատի ունենալով վերոյիշեալ բարբարոսութիւնները, խորհուրդ կը տայինք Թէհրան գտնուող Սուլթանաբատցիներին, որ չվերցնէին Հ. Յ. Դաշնակցութիւնից տրուելիք զէնքերը։ Զի ժամանակի ընթացքում նման օրինակ դէպքեր նոցա համար էլ չեն պակասելու։ Առանց սրան էլ նրանց դրութիւնը նախանձելի չէ, շնորհիւ Խորէն վարդապետի նման պատուհասների։

Վերոյիշեալ ոճրագործութիւնը իր ծննդի մէջ ծածկելու համար ամսոյս 15-ին Խորէն վարդապետին երեք ժանդարմով ճանապարհեցին ոճրի կատարուած վայրը։ Սակայն դժուար պիտի կարենայ կարկատել՝ եթէ երբէք առատօրէն չգործի դրամը։ Սպանութիւն տեղի ունեցած գիւղը պատկանում է նախկին Նաիբ Սալթանէ Քամրան Միրզին։ Վերջինիս ինչ աստիճան հակայեղափոխական լինելը պարզ է, դրա համար էլ եթէ խնդիրը յօգուտ գիւղացիների չվերջանայ, հաւանօրէն նա կը դիմէ Ռուսաց դեսպանատան, որի պաշտպանութիւնն է վայելում։ Ցայ Աստուած որ երկու կողմերն էլ գիջող հանդիսանան և խնդիրը լուծուի առանց իշխանութեանց դիմելու. որպէսզի օտարների առաջ էլ չ'պարզուի, որ հայը հային է սպանում։

Ասակ

Թէհրան 24 Սեպտեմբեր

Յովսէփ Միրզաեանին, Քիրմանշահից վերադարձին, Ղազվինում ձերբակալել էին Ռուսները։ Քննութիւնից յետոյ երէկ երեկոյեան ազատ արձակել էին։ Կարծում եմ այդ ձերբակալութիւնը նրա համար էր, որ նա „տորագրել էր կառավարութեան բանակի հեռագրի տակ, որով պահանջւում է կառավարութիւնից Մէջլիսի վերաբացումը։

Եար-Մահմադ խանը իր բանակով յարձակուել է Քիրմանշահի վրայ, կռիւը տևել է 12 ժամից աւելի, կառավարութեան բանակը յաղթող է հանդիսացել, երկու կողմից էլ կան շատ սպանուածներ ու վիրաւորներ։ Սպանուել է նաև Եար-Մահամադ խանը, մանրամասնութիւնը՝ յաջորդով։

Երեք օրից իվեր Թէհրան է գտնւում Պատգուրսկին, որը պիտի խորհրդակցի Պարսից կառավարութեան հետ երկաթուղային գծի հարցի մասին։

Կաբիտան Բօռելը, և քսնի ժանդարմներ Համադանի մօտերքում վիրաւորուել են աւազակներից և բերուելով Թէհրան բժշկւում են Եուսուֆաբադի զինուորական հիւանդանոցում։

Ներքին գործոց նախարարը, և ընդհանուր մաքսային տեսուչ միւսիո Մօռնառը ընդհարուել են։ Խնդիրը այնքան սուր կերպարանք է ստացել, որ նախարարը ասել է դու չխաբուես նրանով որ կառավարութիւնը քեզ վարձել է հինգ տարով և պիտի տանի քո արածները։ Հաւանական է որ Մ. Մօռնառը պաշտօնանկ լինի, բաց առեալ այդ՝ կան և բազմաթիւ դժգոհներ և գանգատաւորներ պ. տեսչից, որոնք արդարութիւն են պահանջում կառավարութիւնից, որովհետև առհասարակ շատ խիստ, վիրաւորական և արհամարհական են գտնում Պարսիկները Բելժիկացոց վէս վերաբերմունքը։

Ասակ

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԹԵՄԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

Հասարակական պաշտօնական մարմինները ի պարտուց հարկադրուած են հրապարակական հարցերին պատասխանել և կամ հրաժարման ուղին բռնել։

Լռութիւնը կամ «արհամարհանքի» քաղաքականութիւնը լուրջ շրջաններում միայն քմծիծաղ և արգահատանք կարող է շարժել։

1)Կուռ փաստերով, առաջնորդարանի յայտարարութեամբ և տեղապահի՝ վեհին զեկուցած թղթով ապացուցինք, որ թեմ. ժողովը կազմալուծուած է, բայց և այնպէս թեմ. իշխանութիւնն ասում է՝ ասել եմ և պիտի լինի։ [1])

2)Հրապարակով հարց տրուեց յայտնի 100 բուբլու մասին և ցարդ թեմ. խորհուրդը կամ առաջնորդարանը չտուեց իր պատասխանը։

3) Ոչ մի աշխարհում, թէկուզ ամենաանկասկածելի գրաւականով, որբի փողի ձեռնամուխ չեն լինում։ Հարկ է առաջնորդարանը պարզէ թէ ինչ հիմունքներով նա վերցրել և ծախսել է հանգուցեալ Ենովք Բժշկեանի որբերի փողը և տպարանի մամուլն է գրաւ դրել փոխարէն։ Հիմա որ հնչուն դրամ պէտք լինի, կարող են մամուլը ծախել և որբերի փողը տալ։

4)Տպարանական կարիքները հոգալու համար բարերար Միրզաբեկեանից 1300 բուբլու, ինչպէս լսում ենք, նպաստ է ստացուել.

[1]) *Վերջը պիտի անցնի մեր թեզը-այն է պէտք է իսպառ կազմալոյծ յայտարարուի արդէն կազմալուծ. թեմ. ժող. և հրաւ. տրուի նոր ընտրութեան։ Սակայն որքան շուտ, այնքան լաւ։ Մինչև չլինի բուն ժողովրդական ներկայացուցչութիւն, չընտրուին դիրքի, փորձառութեան տէր մարդիկ, ոչ առաջնորդարանը պարտքից կազատուի, ոչ գաւառական ժողովուրդը կազատուի կեղեքումներից և ոչ էլ անգործ ու բեռ դարձած տպարանը օգուտ կրերի։ Խմբ.*

*) Այդ ժողովը չընդունեց Թէհրանի պատգամաւորութիւնը և էքս շահի գալն էլ վճռեց բացասաբար։ Խմբ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՂԱՐԱՂԱՆՈՒՄ *)

Ղարաղանը գտնւում է Թէհրան-Ղազվին Համադան ճանապարհի գրէթէ կենտրոնում։ Այդտեղ հողագործութեամբ ապրում են մօտաւորապէս երեք հարիւր տուն հայեր, բաժանուած հետևեալ եօթը գիւղերում, Լաո, Ներքի-Զանախչի, Վերի Զանախչի, Ամիրաբատ, Զարհատ, Ենգի-Ղալա և Զանբար։

1905 թուականի կիսում էր, որ բարեհաճ կամեցողութեամբ Կոստանդ խան Դաւիթեանցի [1]) մեր գիւղի աղսոպկալները մի նամակով դիմեցին Հնչակեան կուսակցութեան Թէհրանի մասնաճիւղին, խնդրելով նրանցից ուսուցիչներ վերոյիշեալ գիւղերի համար։ Այդ կուսակցութեան կողմից նոյն թուի աշնանը տեղս եկաւ պ. Էմանուէլ Մօզեանը, վերջինս կարճ ժամանակում իր ուսումնասիրութիւնը կատարելուց յետոյ, Ներքին-Զանախչիում հիմնեց մի ուսումնարան, առժամանակ Վարդան-Քահանայ Դիլանեանի տանը՝ մի առաձին սենեակ. ուր և ունեցաւ 30-25 աշակերտներ։ Մօտ մի ամիս յետոյ ինքը ճանապարհուեց Թէհրան բերելու համար 2-3 ուսուցիչներ ևս։

Եւ իսկապէս չէր անցել երկար ժամանակ պ. Մանուէլը վերադարձաւ Թէհրանից, հետ ունենալով երկու ուսուցիչներ, մինչ դեռ մեր գիւղացիքը այն համոզումն ունէին թէ, նա գնաց բայց այլևս չի վերադառնայ։

Վերջապէս հասան թէ չէ՝ երկրորդ օրը գործի ձեռնարկեցին. Վերի Զանախչիում, ուսումնարան ընտրեցին Իսախան Մովսէսեանի տան բակի մէջ մի առանձին սենեակ. իսկ Ենգի-Ղալա էլ Քաթխուտայ Շահքարամ Դիտուրեանի տնում, նոյնպէս մի առանձին վերնայարկ սենեակ, ահա այսպէս սով մեր Ղարաղանն էլ ունեցաւ իր երեք ուսումնարանները. որոնց մէջ վերին աստիճան խնամքով առաջ գրեցաց ուսման գործը։ Մոռացայ ասել որ ուսուցիչները իրանց հետ բերել էին զանազան տեսակ դասագրքեր, տետրակներ, մատիտներ, մի խօսքով այն պարագայքը, որ պէտք էին լինելու աշակերտներին։ Մեզ տալիս էին բոլորովին ձրի և ոչնչից փող չէին ստանում, չնայելով, որ պ. Մանուէլը նախապէս գիւղացոց հետ որոշել էր որ իւրաքանչիւր աշակերտի համար ամսական մի դրան վճարեն ծնողները։ Բացի որ դրամ չէին ստանում, իւրաքանչիւր ուսուցիչ էլ ամսական տասը թուման վճարում էր այն տանը, ուր ապրում էր ինքը։

Բայց դու արի ու տես վայը եկել էր այն գիւղացու գլխին, որ գործով գնար քաղաք՝ Թէհրան. էլ Դաշնակցականները կը շրջապատէին նրանց և կսկսուէր հակա-Հնչակեան պրօվակացիան թէ՝ «Ձեր վարժապետները փրօտ են, կաթոլիկ են, չլինի, որ երեխայ տաք նրանց կարդացնելու, նրանք Ձեզ լուս հաւատից կը հանեն, նրանք հայախօս թուրքեր են»։ Մի խօսքով Դաշնակցականները երբէք խրտրութիւն չէին դնում միջոցների մէջ վարկաբեկելու մի կուսակցութեան ուսուցիչներին, որոնք զուտ ազգասիրաբար էին ստանձնել ու առաջ էին տանում դպրոցական գործը առանց դժգոհութեան նշոյլ անգամ ցոյց տալու։ Բայց երբ Դաշնակցականները դրանով էլ չհասան իրենց ցանկալի նպատակին, կաշառեցին գոյն զգոյն Դիլանեան Վարդան քահանային։ Վերջինս այն օրուանից որ դառել է քահանայ այնքան անգամ պատարագ չէ արել որքան որ յաճախ Դաշնակցական ու Հնչակեան է դառել և օգտուելով կուսակցութիւնների ներողամտութիւնից, կեղեքել է զանազան մարդկանց։ Դրա համար էլ մեր գիւղատէր նախկին Նայիբ Սալթանէ Քամրան միրզամուրաշիր Զավատ խանը շարունակ ասում էր նորան, թէ Տէրտէր դու լաւ ձիաւոր ես ինչու համար Տէրտէր դարձար, «այսինքը երբ լաւ հմուտ աւազակ էիր ինչու համար քահանայ եղար)։ Վերջապէս այդ քահանայի անցքալի և ներկայի վրայ երկար կանգ չառնենք, որովհետև մեր շրջանի ամբողջ մարդիկ գիտեն նրա ինչ հեշտային լինելը։ Տեսնենք նա ինչ միջոցների դիմեց հիմնայատակ անելու այն ուսումնարանները, որ անվերջ զոհողութիւններով գլուխ էր բերուել։ Նախ դիմեց այն միջոցերին որ Դաշնակցութիւնը դիմել էր, սակայն կացինը քարի էր կպել, նոյնպէս դրա կացինը քարի կպաւ։ Բայց շուտով փոխեց իւր à la Դաշնակցական տակտիկան, սկսեց գիւղացոց ասել որ Հնչակեանների բոլոր զոհողութիւնը նրա համար է, որ Ձեր երեխաները մեծանալուց յետոյ տանեն Հայաստան կռուի Տաճիկների դէմ։

Իհարկէ այդքան սատանայական գործ դրած միջոցներն էլ անհետևանք չէին կարող մնալ։ 1906 թիւ Օգոստոս ամսի կիսումն մեր գիւղի ուսուցիչը գնաց ներքի Գիւղ. յիշեալ քահանայաձև մարդուն բացադրութեան կանչեց Կոստանդ խանէնց տունը իր զզուելի արարքների համար (թէ և տան տէրը տունը չէր բայց ներկայ էր նրա եղբայր Սամսոն խանը.) այդտեղ վարագոյրը պատռուեց, երևան եկաւ Տէր Վարդանը իրա իսկական գոյնով, խօսակցութիւնը սուր կերպարանք ստացաւ, փոխուեց զալմազալի։ Երեկոյեան վերադարձաւ միանգամայն զզուած՝ Օգոստոս վերջում ընկերներով ճանապարհուեցին Թէհրան և այլևս չվերադարձան։

(Շարունակելի)

ուր են մտցուել այդ դրամները, ինչ բանի վրայ են ծախսուել, տպարանը դրանից օգտուե՞լ է։

5) Ցանկալի է լսել տպարանի հաշիւների մասին։ Ինչ կարող է ժողովրդի պատգամաւորը լսել, ինչու նոյնը ժողովուրդը չի կարող կարդալ հրապարակով։ Ցարդ պատգամաւորական ժողովն էլ հրապարակով իր նիւթական և բարոյական գործունէութեան հաշիւը չի տուել։ Ի՞նչ եղան Ղարադաղի նպաստների հաշիւները։

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

—

Սեպտեմբեր վերջերին Թաւրիզում ձերբակալուեցին երկու հայեր։ Ձերբակալուածները 20-ից աւելի հեծեալ ռուս կօզակների հսկողութեամբ բերուեցան հիւպատոսարան քնութեանն։

Սեպտ. 30-ին Արամեան դրպրոցի թատերասրահում կայացաւ հասարակական ժողով, ուր մշակուեց հեռագրի մի բանաձև և ուղարկուեց էջմիածին Կաթուղիկոսին, որ վերջինս դիմէ Ռուսաց կայսեր՝ պաշտպանելու հայերին Օսմանեան բարբարոսութիւններից։ Ինչ որ կարմիր և «անսուտ» «յեղափոխականներ» երևի Տաճիկ հիւպատոսարանի բարեացակամութիւնը չկորցնելու համար և թերևս Իտտիհատին էլ չվշտացնելու նպատակով՝ չէին եկել այդ բողոքի միտինգին։

Թեմիս կարգադրիչի շրջաբերական գրութեամբ ազդարարուել էր Արամեան-Անանեան, կենդրոնական և Հայկազեան-Թամարեան դպրոցների վարչութեանց, որ Սեպտ. 29-ին Տ. Տ. Գէորգ Ե. կաթուղիկոսի անուանակոչութեան առթիւ դասերը դադարեն և աշակերտները պատարագին բերուին մայր եկեղեցի։ Երեք դպրոցներում դասեր չեղան։ Պատարագին ներկայ էին միայն Արամեան դպրոցի ուսուցիչներն ու սաները։

«Միտքում» Արամեան դպրոցի 60-ամեակը տօնելու արծարծած հարցը արդէն իրականութիւն դառաւ։ Ի հետևանս հոգաբարձութեան դիմումի՝ Սեպտ. 30-ին ժամը 5-ին, պ. Զ. Նազարբէգեանը Ղալայի և Լիլաւայի մի կարգ պարոնների կանչելով իւր տունը առաջարկեց խորհրդակցել Յոբելեանի, յոբելեանական յանձնաժողովի ընտրութեան և այլ հարցերի մասին։ Նոյն ժողովի նախագահ ընտրուեց Դր. Ասլանեանը։ Դպրոցի նիւթականը ապահովելու, դիմումներ անելու և յոբելեանը գլուխ բերելու համար այդ ժողովի կողմից ընտրուեց մի յանձնախումբ, որի անդամներն են պ. պ. 1) Զ. Նազարբէգեան, 2) Դր. Պ. Ասլանեան, 3) Զ. Բուդաղեան, 4) Թ. Աֆթանդիլեան, 5) Յ. Ջանեան, 6) Մ. Տէր Յակոբեան, 7) Արսէն Աֆթանդիլեան, 8) Սմբատ Մելիք Սարգսեան։ Յանձնախումբը գործելու է հոգաբարձութեան խորհրդակցութեամբ և աջակցութեամբ:

Սալմաստի հայերի կողմից պատգմ. ժողովի համար «ընտրուած» ներկայացուցիչներ կան, շատերը հետաքրքրուում են իմանալ թէ այդ «ժողովրդական ներկայացուցիչները» ինչ են արել ցարդ Հաջի Թաղուց կեղեքուած և թաւրիզ թափուած Սալմաստցոց համար։ Այդ ձգձղուող հարցին կարուկ մի դարման անելու համար՝ Հոկտ. 2-ին հ. Ներսէս վարդապետը պ. պ. Զ. Նազարբէգեանի և Զ. Բուդաղեանի հետ այցելեց Սփահդար Աազամին, որ խոստացաւ կարգադրել գիւղացիներից առնեն տասից մէկ հարկ։ Պատգամաւորութիւնը գոհ է մնացել է Ս. Աազամի ընդունելութիւնից։

Ուրախ ենք յայտնելու, որ մերառաջարկները արձագանք են գտնում կառավարութեան կողմից։ «Միտք»-ի նախորդ համարում Սփահդար Աազամի և Հաջի Շօջաէդ-Դովլի բարձը ուշադրութիւնն էինք հրաւիրել մեր փողոցների յաւիտենական անմաքրութեան վրայ, և ահա կարգադրւում է անմիջապէս Շէշկիլան և այլ փողոցները ունենան իրենց աւելողները։ Այդ առթիւ հայերից ժողով էր կանչուած նոհանգապետութեան հրամանով Ղալաբէգու մօտ՝ խորհելու հայ թաղերի համար ևս։ Աւելացուել նաև փողոցների լապտերների քանակը։

Հացի, ցորենի գինը զգալի կերպով բարձրանում է, ազգաբնակութեան մեծամասնութիւնը որ չքաւոր է, խիստ նեղւում է այդ թանգութիւնից, առանձապէս հրաւիրում ենք Սփահդար Աազամի և Հաջի-Շօջա-էդ-Դովլի ուշադրութիւնը և այդ կարեւոր խնդրի վրայ, թեթևացնելու թուրք և հայ աղքատ ժողովրդի ծանր կացութիւնը։

Կարգադրուած է, որ Պարսից կառավարութիւնից կենսաթոշակ և միւսթամուրլու ունեցողները, մինչև մի ամիս իրենց ունեցած հրովարտակները տանեն մաքսատուն ներկայացնելու ակցիզային վարչ. կառավարչին՝ ստանալու իրենց հասանելիք դրամը։ Ուշացնողները, կկորցնեն իրենց ստանալիքը։ Անշուշտ Արամեան դպրոցի պատ. հոգաբարձութիւնը կշտապի իր հրովարտակները շուտով տանելու և մատեան մտցնելու, որ չուշանայ կամ չվտանգուի դպրոցի 200 թուման նպաստի ստացումը։

Կանանց կազմալուծեալ, վերհատեալ և ամեն ինչ բարձ ի թոզի արած վարչութիւնը շնորհիւ Մելիք Թանգեան վարդապետի պնդումների և քաջալերութեան վերակենդանացաւ և բացեց մանկապարտէզը Հոկտ. 5-ից Ղալա և Լիլաւա թաղերում։

Ուրաթ, ամսիս-6-ին ժամը 10-ին էջմիածին մեկնեց թեմիս կարգադրիչ Մ. Թանգեան վարդապետը։

Երրորդ անգամ Թաւրիզում հրաւիրուած պատուիրակային ժողովը չկայացաւ։ Կարծում ենք այդ անտարբերութեամբ մարդիկ գալիս են ասելու, որ մինչև կազմալուծեալ հին կազմը և առաջնորդարանը պարտքերի մէջ խրող մարմինը չհեռանայ և նոր ընտրութիւն չայտնուի, ոչ ոք ժողովի չի գայ։

Ամսոյս 7-ին, կիրակի առ. ժամը 8-ին Սովուշբուլաղ մեկնեց վից Կոնսուլ Եասսը 10 կօզակների ուղեկցութեամբ։

Մարդիկ՝ որ ոչ մի դպրոցական կուրս չեն անցել, ոչ մի Եւրոպական լեզու չգիտեն, 3-4 ամիս մի տեղ ինչ որ պրակտիկայով որև է արհեստ են սովորել՝ իրենց «դօքտօր» են յայտարարում և ժան կերպով խաղում են այդ համալսարանական տիտղոսի հետ։ Հաւատում ենք այդ խարօնքի՞ վրայ Սփահդար Աազամի և իւր՝ Փարիզում ուսած բժիշկ Ալամ-ուլ-Մուլքի ուշադրութիւնը։ Ժամանակ է չափ դրուի ամեն կամայականութեան և խստիւ պահանջուի լուրջ և բարձր դպրոցական կուրսի վկայական։

Մարաղայից մեզ տեղեկացնում են, որ նորէն հայերը սարգա կշռելու իրենց յայտնի և ստոր եղանակը գործադրում են և զրկում խեղճ աշխատաւորներին, այդպիսիներից «պատուաւոր» մէկը բռնուելով իր շանտաժում՝ ծեծուել է Սուրէն անուն մի տղայի հետ։ Յաջորդիւ մանրամասնութիւն։

Ուրմիից տեղեկացնում են դպրոցի փակման, միսիոնարութեան առաջ գալու, սահմանադրականների գործունէութեան և երևման մասին։ Թղթակցութիւնը յաջորդիւ։

Թէհրանից մեզ ուղարկուած է կառավարական բանակի և Սալար-Դովլի, Եար-Մամադ խանի կռուի և և պարտութեան դէպքի մանրամասնութիւնը. ուղարկուած է նաև ներքին գործոց մինիստր Մօհթաշամի շրջաբերականը Մէջլիսի ընտրութեանց մասին։ Մանրամասնութիւնը յաջորդիւ։

Շահսեվանների դէմ գնացած Ռուս զօրամասը դարձաւ և ուղևորուեց Մակու։ Մեծ քանակութեամբ ռուս զօրքեր են գալիս և անցնում Մակուի սահմանները։ Լուրջ դէպքերի նախորեակումն ենք, կարծես։

ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1.) «Կայծ» №-2, 2) «Հանդէս Ամսօրեայ», №-9, 3) ,,Բազմավէպ'' №-5-6, 4) ,,Փորձ'' №-1.

5) Հնչեակներու գիրքը, 6) Անծանօթ Սուլերներ, 7) Զէյթունի Անցքերէն. հեղինակութիւն Արսէն Երկաթի։ Հրատարակութիւն Մամիկոն Վարժապետեանի Մարզուան 1912 թ.

8.) «Ղարադաղ» №-5

ՊՕՍՏԱՐԿՂ

Թէհրան.—պ. Մ. Փափազեան։ Շնորհակալութիւններով ստացանք մի երկրորդ չէքով 21 թուման՝ ի հաշիւ տեղիդ բաժնեգների։ Սբրանով ընդամենը ստացել ենք ձեզնից 360 ղր.։ Վճարողների ցուցակի տպագրութիւնը յաջորդիւ։ Սրտագին շնորհակալութիւններ ձեր ջանքերի համար։

Մեր թղթակիցներից. Խնդրում ենք համբերել, պարտաւորւենք ենք հերթ պահել յօդուածների տպագրութեան խնդրում։

Ռէշտ.—Մ. Մ—ին, Ձեր բաժնեգին 20 ղուանն ստացանք այստեղ պ. Մ. Պատմագրեանից։

Զիկմէնդ.—(Սիր Դարիոյ շրջան) Արմենակին. Ձեր նամակաշարքը յաջորդիւ։

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„МАГАЗИНЪ ПАРИЖЪ"
PROPRIÉTAIRE J. D. THOMASSIAN
ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ
ԿԱՆԱՑԻ ՆՈՐ ԲԼՈՒԶՆԵՐ
ՇԱԼԵՐ ԵՒ ՓԷՇԵՐ
Եւ նոր կտորներ, նոյնպէս տերմօսներ, որոնք տաք կամ սառը ջուրը 24 ժամ նոյն տեմպերատիւրում պահելու յատկութիւն ունին։
ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՏՈՒԵԼ ԱՌԻԹԻՑ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

«Միտք» շաբաթաթերթի 25-երորդ համարում վերջին երեսում տպուած Մանեայ Նազարեանցի յայտարարութիւնը իւր հայրական տունը ծախելու վերաբերմամբ, բոլորովին ապօրինի ընդունելով՝ հրաւիրում եմ ընթերցողների ուշադրութիւնը։ Այդ տան ծախելու իրաւունքը երբէք վերոյիշեալ տիկնոջ չի պատկանում։ Կալուածները ոչ թէ վերոյիշեալին են այլ իւր ամենափոքր քրոջ օր. Մագթաղինէ Օհանեանցին։ Այդ տան հնդիրը արդէն պաշտօնապէս դրուած է տեղիս հիպատոսարանի սեղանի վերայ և շուտով թաւրիզի հիւպատոսարանի միջոցաւ կը լուծուի, և եթէ տիկնոջ մօտ գտնուում են կալուածի հաւատարմատրութ. կամ մօր կողմից ընդունուած ուրիշ թղթեր, դրանք բոլորն էլ անճիշտ և խարդախ միջոցներով են ձեռք բերուած։ Վերոյիշեալ տիկնոջ մայրը և քոյրերն գտնուում են Ռաշտում։

Ռէշտ Օհան Օհանեան